# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/61 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 54 | - | - | - | Օլիգոնուկլեոտիդային պրայմերներ (ITS տիրույթի համար) Պրայմերները նախատեսված են սնկերի ռիբոսոմային ԴՆԹ-ի ներքին տրանսկրիպցիոն սեպարատորների (Internal Transcribed Spacer - ITS) տիրույթի սպեցիֆիկ ամպլիֆիկացիայի համար: Յուրաքանչյուր օլիգոնուկլեոտիդ պետք է մատակարարվի լիոֆիլիզացված (չորացված) վիճակում կամ նախապես լուծված դեիոնացված ջրում՝ 100 մկՄ (μM) կոնցենտրացիայով: Պրայմերների սինթեզը պետք է իրականացվի բարձր մաքրության աստիճանով (desalted կամ HPLC purified)՝ զերծ կողմնակի սինթետիկ արգասիքներից և նուկլեազներից: 1. Լրակազմի առաջին տարբերակ (ITS5 / ITS4). Հավաքածուն պետք է ներառի ուղիղ (Forward) պրայմեր ITS5՝ 5'-GGAAGTAAAAGTCGTAACAAGG-3' հաջորդականությամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | և հակադարձ (Reverse) պրայմեր ITS4՝ 5'-TCCTCCGCTTATTGATATGC-3' հաջորդականությամբ։ Այս զույգը պետք է ապահովի ամբողջական ITS տիրույթի (ITS1, 5.8S և ITS2) ամպլիֆիկացիան՝ ապահովելով բարձր սպեցիֆիկություն սնկային գենոմի նկատմամբ։ 2. Լրակազմի երկրորդ տարբերակ (ITS-1 / ITS-4). Հավաքածուն պետք է ներառի ուղիղ (Forward) պրայմեր ITS-1՝ 5'-TCCGTAGGTGAACCTGCGG-3' հաջորդականությամբ և հակադարձ (Reverse) պրայմեր ITS-4՝ 5'-TCCTCCGCTTATTGATATGC-3' հաջորդականությամբ։ Պրայմերների հալման ջերմաստիճանը (T_m) պետք է լինի օպտիմալացված 55-60°C միջակայքում՝ PCR ռեակցիայի կայուն կրկնելիությունն ապահովելու համար։ Պրայմերները պետք է տեղադրված լինեն հերմետիկ փակվող, ստերիլ միկրոսրվակների մեջ, որոնք պիտակավորված են պրայմերի անվանումով, հաջորդականությամբ և նուկլեոտիդների քանակով։ Պահպանման պայմանները պետք է ապահովեն կայունություն -20°C ջերմաստիճանում առնվազն 12 ամիս ժամկետով։ Մատակարարման պահին մնացորդային ժամկետը առնվազն 2 տարի Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում։ Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Ապրանքը ազատված է ավելացված արժեքի հարկից, քանի որ ձեռք է բերվելու Appear project 373 Armenia ծրագրի շրջանակներում։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | (տեղեկանքը կցվում է) |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ЭКСТРА МОТОРС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/61 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | марка | наименование производителя | технические характеристики |
| 54 | | | | |